ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայկական մանրանկարչության ուսումնասիրման, առանձնապես նրա հրատարակության գծով մինչև օրս կատարված աշխատանքը տակավին չի կարելի բավարար համարել։ Գեղարվեստական տեսակետից շատ արժեքավոր ձեռագրեր, հուշարձանների առանձին խմբեր, որոնք շաղկապված են ընդհանուր ոճով ու ժամանակով, ինչպես նաև մի շարք հարցեր ու ընդհանրացնող թեմաներ կարոտ են լուրջ ուսումնասիրության։ Մանրանկարչական դպրոցներից մեկին, կամ որևէ մանրանկարիչ-արվեստագետի ստեղծագործությանը նվիրված աշխատություն հրապարակի վրա մենք չունենք։

Սույն հոդվածում փորձ է արվում լուսաբանել միջնադարյան Հայաստանի վարպետներից մեկի՝ Մաթեոսի ստեղծագործությունը։

Մանրանկարիչ Մաթեոսի գործունեության ժամանակաշրջանը համընկնում է XIII դարի վերջին քառորդին։ Նա ստեղծագործել է Վայոց ձորում, Պռոշյան իշխանական տան, մասնավորապես Պապակ և Ամիր-Հասան եղբայրների համար։

Մաթեոսի ստեղծագործությունը նշանակալից դեր է խաղացել Գլաձորի մանրանկարչական դպրոցի ձևավորման գործում[1]։ Թեև չկան անմիջական տեղեկություններ Գլաձորյան համալսարանի հիմնադիր Ներսես Մշեցու մոտ Մաթեոսի սովորելու կամ աշխատելու մասին, բայց ակնհայտ է այն, որ մանրանկարիչը ինչպես իր ոճով, այնպես էլ սրբապատկերագրությամբ հարում է գլաձորյան վարպետներին։

Մեզ չեն հասել Մաթեոսի անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ, բայց պահպանվել են նրա անվան հետ կապված մի շարք հուշարձաններ՝ եկեղեցիներ, խաչքար և մի ինքնատիպ ավետարան։

1275 թ. Մարտիրոս գյուղի[2] հին գերեզմանատանը Մաթեոսի կողմից հիմնադրվել է մի խաչքար-հուշարձան (բարձրությունը 2,6 մետր) հետևյալ մակագրությամբ. «Կամաւ այ (աստուծոյ) իշխանութիւն Ամիր Հասանա եւ Մաթէոս վդ կանգնեցի զնշանս ինձ եւ Պետրոս եւ ծնողաց իմոց որք (երկրպագէք ած) ողորմի նոց»[3]։

---

[1] *Գլաձորյան համալսարանի և մանրանկարչական գեղարվեստական դպրոցի մասին ավելի հանգամանորեն տե՛ս Ա. Ավետիսյանի «Գլաձորի համալսարանը» հոդվածը, «Լիմա-ձին», 1956, IV—V, էջ 82—92։*

[2] *Վայոց ձորի Մարտիրոս գյուղը գլխավոր կենտրոններից մեկն է, կամ, ինչպես ենթադրում է Ջալալյանցը,—Պռոշյան իշխանների ամառանոցն է եղել. տե՛ս Գարեգին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 126։ Սարգիս Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 200։ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 177։ „Материалы по археологии Кавказа", вып. XIII, Москва, 1916, էջ 158։*

[3] *Ճիշտ նույնությամբ, միևնույն թվագրությամբ այդպիսի մի մակագրություն կա վիմափոր եկեղեցու հարավային պատի վրա (բեմի մոտ), Մարտիրոս գյուղից ոչ հեռու, այն ժամանակ, երբ այդ եկեղեցու շինարարությունը համարում են 1286 թ.։ Քանի որ եկեղեցու պատերի վիմագիր արձանագրությունների մեջ այլ, ավելի վաղ թվագրություն չկա, քան 1275 թ., ապա պետք է եզրակացնել, որ շինարարության սկիզբը վերաբերում է 1275 թվականին, նույնիսկ, կարող է պատահել, մի քիչ վաղ։*

Մեր կարծիքով խաչքարը հանդիսանում է ոչ թե գերեզմանի հուշարձան, այլ կանգնեցվել է ի նշանավորումն ինչ-որ մի կարևոր եղելության, հնարավոր է որպես հիշատակ վիմափոր եկեղեցիների կոմպլեքսի շինարարության սկզբնավորման։ Մեր այս ենթադրությունը հաստատվում է և իրեն խաչքարի տեղադրությամբ—Մարտիրոս գյուղից դեպի վերոհիշյալ եկեղեցիները տանող ճանապարհի վրա։ Նման հուշարձանները՝ նվիրված այս կամ այն՝ եղելությանը, սովորաբար կանգնեցվում էին ճանապարհների վրա։ Հետագայում այդպիսի խաչքարերի շուրջը կարող էին գոյանալ գերեզմանատներ։

1286 թ. Մաթեոսը ավարտում է դեռևս 70-ական թ. սկսված վիմափոր եկեղեցիների շինարարությունը. դրանք գտնվում են Մարտիրոս գյուղից ոչ հեռու, Աղավ-մենաստան կոչվող լեռան արևմտյան լանջին[1]։

Վիմափոր կոմպլեքսի գլխավոր սրբությունը—դա «Սուրբ Ստեփանոսի» եկեղեցին է։ Եկեղեցին չորս աբսիդանի է, որոնցից արևելյան բեմը հատակագծով կիսակլոր է, իսկ մնացած երեքը՝ ուղղանկյուն։ Գմբեթը ոչ մեծ, երկարացված տեսքով է։ Եկեղեցու մուտքը գավթից է։ Գավթի պատերը ծածկված են խաչքարերով, իսկ եկեղեցունը՝ արձանագրություններով։ «Այս վիմափորները,— գրում է Գարեգին Հովսեփյանը,— Գեղարդի Պռոշի տաճարների վսեմությունն ու արվեստը չունեն, բայց աննշան չեն»[2]։

Այս կառուցվածքներից բացի Մաթեոսի անվան հետ կապված են նաև այլ հուշարձաններ։ Այդպիսիներից մեկը, ինչպես գտնում է Գարեգին Հովսեփյանը, հանդիսանում է Մարտիրոս գյուղի եկեղեցին, որը վերջին մեծ վերանորոգումների պատճառով այնքան է փոխվել, որ դժվար է և նույնիսկ անհնար պատկերացնել նրա նախնական տեսքը[3]։

Մաթեոսը ավելի հայտնի է, որպես մանրանկարիչ. 1292 թ. ավետարանի հեղինակ (Պետ. Մատենադարան, ձեռ. № 6292)։ Այդ ավետարանը ոչ միայն գեղարվեստական նշանակալից արժեք է ներկայացնում, այլև ընդհանրապես մեծ հետաքրքրություն է պատճառում սրբապատկերագրության մի քանի հարցերի իր ըստ ամենայնի ինքնատիպ լուծումով։

1292 թ. ավետարանը պարունակում է մի շարք մանր հիշատակարաններ (էջ 88բ, 101բ, 102ա), և մի ընդարձակ հիշատակարան (էջ 215բ—219բ), որտեղ ասված է, որ այն պատրաստվել է Վայոց ձորում, Աղավ-մենաստանում—Մաթեոսի կողմից, 1292 թ.։ Ձեռագրի ստացողները եղել են Սիսիանոս երեցը ու նրա որդի Ուսամը (էջ 101բ, 217ա)։

Ձեռագիրը վատ է պահպանվել, վերանորոգման է ենթարկվել մի անգամ 1457 թ., այն կատարվել է մեծ խնամքով, նույնիսկ սիրով։ Էջերի վերանորոգումը կատարված է այնպես, որ այժմ դժվար է դրանք զանազանել։ Միայն նրանց վրա սև թանաքով գրված տեքստի թերի բառերից ու տառերից (օրինակ, էջ 101ա, 105բ, 106բ և այլն) կարելի է իմանալ վերանորոգման մասին։ Սակայն, նկատենք, որ վերանորոգող Սարգսի կողմից խորաններ պատկերող մի քանի թերթեր ձեռագրի սկզբում շփոթված են, այսինքն չեն կարված իրենց տեղերում։ Այսպես օրինակ, մեկ կամարի խորանին (էջ 1բ) համապատասխանում է ինչպես կոմպոզիցիայով, այնպես էլ խորանի տեքստի շարունակությամբ նույնպես մեկ կամարանի խորան, նշված է 4ա էջում։ Այնուհետև, ինչպես երևում է, նա ինքն է լրացրել նաև խորանների նկարով թերթը։ Այդ խորանները մյուսներից տարբերվում են ինչպես նկարով, կոմպոզիցիայով, անհաջող կատարումով, այնպես էլ անորակ ներկերով (էջ 6ա—բ)։ Ներմուծված էջի պրիմիտիվ բնույթի խորանները, կարծում ենք, վերցված են ուրիշ ձեռագրից[4]։ Հետագայում Սարգիսը ներկել է դրանք։ Այս ենթադրության օգտին են խոսում այնպիսի տվյալներ, ինչպիսին խորանի նախկին բաց կոնտուրների վրայով ևս ներկով անցնելն է և բարակ սյուների ու կամարների դեղին,

---

[1] Տե՛ս 1292 թ. ավետարանի հիշատակարանը (Պետ. Մատենադարան, ձեռ. № 6292), որտեղ այդ եկեղեցիների շինարարության մասին ասված է հետևյալը. «...Ես Մաթէոս վդ. հրամանով և ձեռնտվութը Ամիր Հասան շինեցի ղտեղիքս միաբանայ բնակ վանս և շինեցի զեկեղեցիքս և ժամատունս» (էջ 218ա)։

[2] Գարեգին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք..., մասն առաջին, էջ 149։

[3] Նույն տեղում, էջ 148։

[4] Գարեգին Հովսեփյանը ծանոթ լինելով այդ ձեռագրի հետ, ոչինչ չի ասում այդ ներմուծված էջի մասին, այսինքն չի առանձնացնում այդ խորանները. հավանորեն նա դրանց հեղինակն է համարում ծաղկող Մաթեոսին։ Տե՛ս նրա «Խաղբակյանք կամ Պռոշյանք...», մասն առաջին, էջ 149—150։

կարմիր և կանաչ գույներով ներկված լինելը։ Ընդհանրապես այս թերթը տարբերվում է մանրանկարիչ Մաթեոսի խորաններից իր ամբողջ բնույթով՝ ընդհանուր գունային գամմայով, կատարման որակով ու ձևով։

Վերանորոգողի կողմից, այս երկու խորաններից բացի, ներկված են նաև մի շարք լուսանցքազարդեր՝ օղակներ, որոնց կոնտուրները նշված են եղել մանրանկարիչ Մաթեոսի կողմից (օրինակ, էջ 179ա, 192ա, 200բ և այլն)։ Մնացածներից դրանք պանազանվում են նաև ներկելու հմտության բացակայությամբ և ներկերի անորակությամբ։ Բացի մանրանկարիչ Մաթեոսի գծած օղակների թարմացումից վերանորոգողն ինքն էլ թվերը շրջագծել է (էջ 182բ և այլն)։

Ձեռագրի սկզբում տրված է ներածական թերթ (էջ 1ա, նկ. 1), որտեղ տեքստը վերցված է շրջանակի մեջ։ Կիսակլոր շրջանակների մեջ տեղավորված են մենական սիրամարգեր, իսկ դրսից՝ մենական աքլորներ՝ կավարար դիրքով։ Մանրանկարիչ Մաթեոսը նկարազարդումների մեջ հատկապես սիրում է պատկերել սիրամարգ, որը նա վարպետորեն, նույնիսկ վիրտուոզ կերպով, ներկայացնում է ամենաբազմազան վիճակներով՝ մեկ ներքև նայելիս իջեցրած պոչով, մեկ որպես թռչունների թագավոր՝ հպարտ կուրծքը դուրս ցցած և հովհարաձև պոչը վեր բարձրացրած, մի ոճ, որը յուրահատուկ է հայկական ձեռագրերին։

Նկ. 1

Թերթի ներքևի մասում ձգված քառանկյան մեջ դրված են նույնպես երկու սիրամարգ՝ հանգուցված վզերով։ Բոլոր սիրամարգների վզերին հագցված են օղակներ, մի բան, որ լայնորեն տարածված է հայկական արվեստում։

Այնուհետև ավետարանում հաջորդում են մեկ կամարով և զույգ կամարով խորաններ։ Բոլոր կամարները պայտի ձևով են՝ ծիածանային օրնամենտով, որին հաճախ հանդիպում ենք

հայկական մանրանկարչության մեջ։ Խոյակների նկարը տրված է քարի ձևով։ Դրանք երեք-չորս աստիճանի են՝ որոշակի պրոֆիլով։ Մի քանի սյուների խարիսխները նշված են զուգահեռ գծերով՝ որպես թե դրանք դարսված են քարից։ Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում սյուների խոյակները, 4ա—բ էջերում, որոնք շատ հիշեցնում են քարից քանդակված խոյակները։

Ինչպես խոյակները, այնպես և մյուս նկարազարդումները կատարված են գեղանկարչական մաններայով։ Չնայած մանրանկարիչ Մաթեոսի ներկերը գույներով հարուստ չեն, բայց նրանք արտահայտիչ են համակցությունների մեջ։

Ամբողջությամբ վերցրած մանրանկարիչ Մաթեոսը իր խորանների մեջ շարունակում է հին տրադիցիաները, գործածելով պայտանման կամարներ։

Հայկական մանրանկարչության մեջ, ինչպես իրավացիորեն նշում է Գարեգին Հովսեփյանը, գեղազարդումների համեմատ սրբապատկերագրությունը թույլ է զարգացած[1]։ Մանրանկարիչ Մաթեոսի մոտ, ընդհակառակը, ավելի ուժեղ է զարգացած սրբապատկերագրությունը։

Մաթեոսը վարպետություն է հանդես բերում նույնպես մարդկանց, նրանց գործողության պատկերման ժամանակ։ Նա յուրահատուկ ձևով է պատկերում մորուսը, մազերը մարդու գլխի վրա յուրատեսակ են սանրված՝ կողքերից դեպի հետ, առանձին սահուն գծերով, մի բան, որ ստեղծում է որոշ ծավալային տպավորություն։ Դա առավել դրսևորված է դեմքերի և աչքերի պատկերման մեջ։ Դեմքի ամեն մի գիծ ցցուն է, իսկ աչքերը որոշակիորեն արտահայտում են շոշափելի կլորություն։

Մանրանկարչի մոտ յուրատեսակ ձևով է կատարված նաև ավետարանիչների սրբապատկերագրությունը։ Ավետարանիչները ոչ թե իրենք են գրում իրենց ավետարանները, ինչպես ավանդությամբ ընդունված է մանրանկարչության մեջ Մաթեոսի, Մարկոսի, Ղուկասի վերաբերյալ, այլ նրանցից յուրաքանչյուրն ունի իր աշակերտ-գրիչը, որին ինքը թելադրում է, այսինքն տրված է չորրորդ ավետարանիչ Հովհաննեսի նման։ Գարեգին Հովսեփյանի կարծիքով նման բացառիկ սյուժետային երևույթ գոյություն ունի նաև IX—X դարերի Ռեյմսի մարզի ավետարաններից մեկի մանրանկարների սրբապատկերագրությունում, որտեղ Պետրոս և Պողոս առաքյալները հանդիսանում են թելադրողներ իրենց աշակերտ-գրիչների՝ ավետարանիչներ Մարկոսի և Ղուկասի նկատմամբ[2]։ Ներկա դեպքում Գարեգին Հովսեփյանի եզրակացությունը այնքան էլ ճիշտ չէ, քանի որ մանրանկարիչ Մաթեոսի մոտ ամեն մի ավետարանիչ ունի իր գրիչը, և ոչ թե իրենք են հանդիսանում առաքյալների աշակերտները, որպիսին Ռեյմսի ձեռագրում է։ Մանրանկարչության պատմության մեջ այդ հազվագյուտ երևույթը, որ մատնանշված է Գ. Հովսեփյանի կողմից, կարելի է նկատել «Հեթում թագավորի աստվածաշնչի» 1295 թ. կիլիկյան ձեռագրում (Պետ. Մատենադարան, ձեռ. № 180), ինչպես և 1292 թ. ավետարանում (Պետ. Մատենադարան, ձեռ. № 2848), որը նկարազարդված է Նորավանքում ծաղկող Մոմիկի ձեռքով։

Հետաքրքիր է նաև այն, որ մանրանկարիչ Մաթեոսի մոտ Հովհաննու աշակերտ Պրոխորոսը, ընդունված սովորության հակառակ, տրված է մորուսով, մինչդեռ մյուս ավետարանիչների գրիչները անմորուս և անբեղ պատանիներ են։ Հավանաբար այս երևույթը գալիս է հին տրադիցիաներից, որովհետև մորուսավոր Պրոխորոսին հանդիպում ենք մի շարք հայկական ձեռագրերում, օրինակ, վարպետ Մոմիկի 1292 թ. ավետարանում, 1354 թ. Ախթամարի ձեռագրում (Պետ. Մատենադարան, ձեռ. № 2843), XIV—XV դդ. ավետարանում (Պետ. Մատենադարան, ձեռ. № 4456) և այլն։

Մանրանկարիչ Մաթեոսի մոտ ավետարանիչները պատկերված են անսովոր վիճակով՝ նրանցից յուրաքանչյուրը, աշակերտ-գրիչների հետ միասին, տրված է խորանի տակ (էջ 7բ, 64 բ, 102բ և 156բ, նկ. 2 և 3)։ Խորանների ուղղանկյուն վերին մասը հաստատված է երկու սյուների վրա՝ արխիտրավային ծածկով։ Սյուներն ունեն իրենց ներքևի մասից լայնացող խարիսխ։ Մի քանի սյուների խոյակները նման են խարիսխներին, բայց շրջված տեսքով։ Մյուս սյուների խոյակները կորնթոսյան տիպի են։ Միայն առաջին ավետարանիչը պատկերող խորանի սյուները չունեն խոյակներ, այդ սյուները հիշեցնում են փայտե հենասյուներ։ Խորանների զար-

[1] Տե՛ս Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Խաղբակյանք կամ Պռոշյանք.... մասն առաջին, էջ 150։

[2] Նույն տեղում։

Ա. 2

Ա. 3

պանկարը կազմված է ձվաձև սրածայր օղակներից, որոնք ստացվել են հատումներից, երեք-չորս և ավելի շարքերով։ Դրանք ի վերջո կազմում են խաչավորված թեք շարքեր, որոնք կանաչ, դեղին, կապույտ և սպիտակ դույների բավականին հետաքրքիր համակցումներ են։ Այդ գարդանկարը լայնորեն տարածված է. դրան կարելի է հանդիպել միջնադարյան Հայաստանի ճարտարապետական հուշարձանների վրա, այն մեզ է հասել նաև հայկական ասեղնագործության նմուշների միջոցով[1]։

Սյուների կողքին բարձրանում են ծառեր՝ մերթ ոճավորված արմավենի՝ կախված ողկույզներով, մերթ խոշոր տերևներով ծառ։ Չորրորդ ավետարանիչի մանրանկարում գարձյալ չորս պտուղներով արմավենու ծառի առջև դրված է մի մեծ նախշած սափոր՝ գեղեցիկ պատկերով։

Խորանի վերևում իրար կողքի պատկերված են կլոր ջրավազաններ, որոնցից միջինը ավելի բարձր է։ Մի դեպքում այդ ավազաններից ջուր են խմում սիրամարգները՝ հովհարաձև պոչերով, մյուսում՝ աքաղաղները։ Պատկերված են նաև այլ թռչուններ։

Խորանի տակ, երկու սյուների միջև, պատկերված է ավետարանիչն իր գրագրի (գրչի) հետ։ Վերջինս սովորաբար տեղավորված ձախ կողմում, նստած է բարձր թիկնաթոռի վրա։ Սրա ծնկներին դրված է մի մեծ բացված գիրք, որի թերթը նա բռնել է ձախ ձեռքով, իսկ աջով կարծես թե գրում է ավետարանի առաջին տողերը։ Նկարիչը մոռացել է ավետարանիչ Մարկոսի գրագրի ձեռքում դնել եղեգնյա գրիչը, որը մենք տեսնում ենք մյուս գրագիրների մոտ։ Գրագրի առաջ պատկերված է ավետարանիչը՝ մաղերի խիտ սանրվածքով։ Նա հագել է երկար կգեստ։ Ծաղկողը ընդգծել է ավետարանիչի դինամիկ դրությունը, նրա մի ձեռքը ուղղված է դեպի աստղազարդ երկինքը, իսկ մյուսը՝ դեպի գրագիրը։

Չնայած թելադրող ավետարանիչների կոմպոզիցիայի, ինչպես և խորանների նկարազարդման ընդհանրությանը, այնուամենայնիվ մանրանկարիչ Մաթեոսը կարողացել է խուսափել միօրինակությունից։ Խորանների նկարազարդման մեջ մասերի տարբերակմանը զուգընթաց վարպետ Մաթեոսը դասավորության մեջ աննշան փոփոխություն մտցնելով տարբերություն է մտցրել նաև ավետարանիչների ու գրիչների ֆիգուրներում։ Զանազանությունը ավելի քան ուժեղանում է նաև մեծ հաշակով գործադրված գունային գամմայի բազմազանությամբ։

Առաջին երկու ավետարանների անվանաթերթերի գլխազարդերը (էջ 8ա, 65ա, նկ. 2)՝ բարդ կտրվածքով միջին մասերում, գրավում են գրեթե թերթի կեսը։ Հենց գլխազարդերում դրված են երկուական հուշկապարիկներ, ընդ որում, մի գլխազարդի վրա՝ կողքի կողմից, որոնք նայում են միմյանց, մյուսի վրա՝ մեջտեղը. վերջիններիս մոտ մի թեր ցած է իջած, իսկ մյուսը՝ հորիզոնական դրությամբ է։ Հուշկապարիկների դեմքերը արտահայտիչ են և գեղեցիկ։

Գլխազարդերի վերևում մենք տեսնում ենք կաքավներ, որոնք դասավորված են «կենաց աղբյուրի» երկու կողմերում. այնտեղից նրանք խմում են կենարար ջուրը։ Կաքավները, ինչպես հայտնի է, հանդիսացել են թեթև վարքի տեր պարող կանանց ատրիբուտ, և դրանք լայն տեղ են գտել հայկական մի շարք արվեստներում։ Կաքավները հատուկ արտահայտչականություն են ստացել նաև հայկական ժողովրդական երգերում, և մինչև օրս էլ հարատևում են որպես պարող կանանց սլշրանքը բնութագրող պիտակներ[3]։

Հաջորդ երկու ավետարանիչների անվանաթերթերի գլխազարդերում (էջ 103ա, 167ա, նկ. 3), որոնք այս դեպքում ունեն ուղղանկյան ձև, արդեն չկան հուշկապարիկներ, այդ գլխազարդերը նկարազարդված են արմավենիով և երեքթևանի թերթով։ Այդ ուղղանկյան գլխազարդերում նույնպես նկարված են ավազաններ՝ կաքավներով և ուրիշ թռչուններով։

Լուսանցքազարդերը բոլոր անվանաթերթերում կազմված են հյուսվածքից և սրտաձև արմավենիներից, որոնք վերևում վերջանում են նախշված գեղեցիկ խաչով։ Ավետարանների առաջին գլխագիր տառերը զարդարված են արմավենիով, այսպես կոչված, «ութանոցներով»։

---

[1] Տե՛ս С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Изд. АН Арм. ССР, Ереван, 1952, էջ 85։

[2] Տե՛ս Գարեգին Հովսեփյան, Խաղրակյանք կամ Պոռշյանք..., մասն առաջին, էջ 151։

[3] Այդպիսին են նրանք ներկայանում հայկական ժողովրդական երգերում, օրինակ. «Քելե Սաթո» («Քելե, Սաթո, քելե, ինչ նազ ես անում, սալամ կաքավի պես փարվաղ ես անում») և այլն։

1292 թվականի ավետարանի լուսանքագարդերն ունեն պարզ և հասարակ ձևեր՝ գունավոր շրջագծեր, որոնց մեջ ցույց է տրվում տեքստի գլուխը։

Այսպիսով այս ձեռագրի մանրանկարների հեղինակ Մաթեոսը եղել է նշանավոր վարպետ, տիրապետել է ձևերի հաղորդման հմտությանը և ճիշտ նկարելու արվեստին։

Գեղանկարչական այն ոճը, որով աշխատում էր Մաթեոսը, մոտ է որմնանկարչությանը։ Մաթեոսի գեղանկարչությանը հյութեղություն են հաղորդում նաև գույները։ Նկարիչը, չօգտագործելով ոչ այնքան բարդ ներկապնակ, տվել է գույների հետաքրքիր համակցում։ Մաթեոսը չի օգտագործում ոսկին, վերջինս նրա մոտ փոխարինված է դեղին գույնով։

Մանրանկարիչ Մաթեոսը նորին հետամուտ լինելով հանդերձ, կարողացել է ճիշտ մոտեցում ունենալ նաև անցյալի ժառանգության նկատմամբ (այդ նկատելի է հատկապես խորաններում, մոնումենտալ պայտաձև կամարներում և այլն)։ Վերջին հաշվով նրա արվեստը անհետ չի անցել ժամանակակից վարպետների, մասնավորապես Գլաձորյան մանրանկարչական դպրոցի համար։

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ МИНИАТЮРЫ

А. Н. АВЕТИСЯН

(Резюме)

Одним из значительных мастеров армянской миниатюры был художник Матеос, период деятельности которого падает на последнюю четверть XIII в. Он работал в Вайоц-дзоре для княжеского дома Прошянов.

С именем Матеоса связаны памятник-хачкар на древнем кладбище села Мартирос, внутрискальные церкви неподалеку от этого села, а также церковь в самом Мартиросе.

Матеос более известен как миниатюрист, автор евангелия 1292 года (Гос. Матенадаран, рук. № 6292), представляющего не только значительную ценность с художественной точки зрения, но и вызывающего весьма большой интерес вполне оригинальным решением некоторых иконографических вопросов. Евангелие было изготовлено в Вайоц-дзоре.

В армянской миниатюре по сравнению с орнаментальными украшениями иконография вообще развита слабее. У художника Матеоса, наоборот, она развита сильнее. У него каждый из евангелистов имеет своего писца. Несмотря на общность композиции диктующих евангелистов, художник все же смог избежать однообразия. Помимо различия деталей в украшениях хоранов, Матеос небольшими изменениями в расположении фигур внес разнооттеночность в них. Она еще более усиливается благодаря разнообразию цветовой гаммы.

Рукопись показывает, что Матеос обладал верным рисунком, большим умением передачи формы.

При несложной палитре у Матеоса получается, однако, интересное сочетание цветов. Он не употребляет золота. Оно у него заменено желтой краской.

Художник Матеос в поисках нового сумел проявить творческий подход к наследию прошлого, и в итоге его искусство не прошло бесследно для мастеров-современников, в частности для представителей Гладзорской школы миниатюры одноименного монастыря.